72. ԴԱՆԳԼԱ ԿՆԵԳՅԸ

Ինըմ ա, չընըմ, մին մարթ ա ինըմ։ Ըտրան ինըմ ա մին դանգլա, դոդոշ կնեգյ։ Մեհետ էտ կնեգյը քյնո̈ւմ ա ճո̈ւրըը։ Կյեռթնուկնեն կռկռամ ըն։

Էտ կընեգյն ասըմ ա. — Հի՞նչ ա, Ջլի՜ան բիրի, սանդերքը պիրիմ պո̈ւռթը կյղի՞ս։

Կյեռթնուկնեն մին էլ ըն կռկռամ։ Էտ կնեգյը գյիդո̈ւմ ա, թա̈ ասըմ ըն՝ «պեր»։

Քյնո̈ւմ ա տոն, պռթի թիլին վըեստերը պիրո̈ւմ ճո̈ւրըը քցում, վեր կյեռթնուկնեն գյա̈րա̈ կյործին։

Էն մին օրը կյամ ա ճո̈ւրը, կռանում, տեսնում մին պսպղուն պեն։ Էտ կնեգյը էտ փլստրատին տվող պենը յոր ա օնում, քյոււնո̈ւմ տոն։

Ուրո̈ւգյո̈ւնը մարթը կյամ ա, ասում ա.— Ա՛ մարթ, էրեգյ վըեստերը տարալ ըմ տըվալ Ջլի՜ան բիրուն վեր գյա̈րա կյո̈րծե, էս պենն էլ գյոլումն ա իլա̈լ, պերալ ըմ, անկյին քար ա։

Մարթը ասըմ ա. — Ա՛ կնեգյ, օրիշ տեղ ասիս վուչ։ Տա անկյին քար ա։

Էքյսը էտ կնեգյը անկյին քարը տամ ա, մին պեռնը ժեվեր ինքյ օնում, տոնը սարքում։

Մարթին կյալի վախտը վաղ ա տամ մարթին առաչը, ասըմ. — Ա՛ մարթ, տոնը սարքալ ըմ, մին եք տես, էն պծըպածի ընելիս քարը տվալը ըմ, մին պեռնը ժեվ ինքյ կա̈լա̈լ։

Մարթը կզնվում ա, կնգանը տանան տո̈ւս քցում։

Կնեգյը քյումո̈ւմ ա, տեսնում քյո̈ւշո̈ւմը մին օղտ վըեսկավ պեռ-նած։ Էտ օղար քըշըմ ա, կյամ ըրդի տոն, ծեն տամ։ Մարթը տո̈ռնը քլլում ա, վեր կնեգյը կարե վուշ նի մննե։

Ասըմ ա. — Ա՛ մարթ, կըռըմեռ պելին ա, եկալ ա, տո̈ռնը պեց ըրա, կյա։

Մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, ռադ շը՞ս ըննա̈կա՞ն կլխաս.— ըսկսում ա ո̈ւշո̈ւնց տալը։

Կնեգյն ասըմ ա. — Ա՛ մարթ համոթ ա, կըռըմեռ պելին կյամ ա, տո̈ռնը պեց։

Մարթը տո̈ռնը պենում ա, տեսնում մին օղտ, վըեսկավ պեռնած։ Մարթն ուրխընալավ պիրում ա տոն, պեռնը քանդում, տղվարըմ, օղտը մորթում, ածում, կյումըմը մին տեռտակ ցորնի վեր կար, ընդըրա մաշը, ինքյը ըռըշկետանը կապըմ, շինը յոր օնըմ, գյվա̈քյիս թա հոնձ ա քյընըմ։

Ընգետանը կնդանն ասըմ ա. — Ա՛ կնեգյ, օրիշ տեղ ասիս վուշ-հա՞...

Կնեգյը քյումում ա տո̈ւսը, տեսնում մին Թորք օղտեն շոռ ա կյամ։

Էտ կնեգյն ասըմ ա.— Կըռըմեռ պելուն ը՞ս շոռ կյամ, էնա մեր տանը, մեր մարթը վըեսկեն եր ա կալալ, ո̈ւրա̈ն մորթալ ածալ վերը։

Թորքը կյամ ա մարթին ասում, մարթը վղավ չօնում, ասըմ ա. — Էտ պենը հիբի՞ յա իլա՞լ։

Թորքը ասըմ ա.— Մին էրկու օր ա։

Կնդանան հրցնում ա, կնեգյն ասըմ ա. — Հնձին վըդին ա իլա̈լ։

Վերշը Թորքը տեսնըմ ա, վեր ըտրանց անա պեն չի տո̈ւս կյամ, սուդի յա քըցում կործը։ Էտ մարթը քյումո̈ւմ ա սուդը։ Կնդանն ասըմ ա, տո̈ռնը կպահիս։ Կնեգյը տեսնում ա, վեր մարթը ետե յա կյամ, տռները պուք ա տամ, շլա̈կում, քյումո̈ւմ սուդը, էն վախտն ա տեղ հսնում, վեր մարթին խուսուցնում ըն։

Մարթը վեր կնգանը տեսնըմ ա իտի, ասըմ ա. — Տեսնում ը՞ք, ընդըրա խելքը կլխե՞ն ա, վեր ըտրա ըսածին եշում ըք։ Վեր խելքը կլխեն ինի, տռները կշլակե կյա՞, ասալ ըմ տռանը եշի, շլա̈կալ ա, եկալ։

Էտ մարթիքյ տեսնում ըն, վեր էն կնգանը խելքը կըլխեն չի, մարթին ըզադում ըն։